Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոն զբաղեցնելու համար՝

ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիրը 3.3-1):

2-րդ կարգի մասնագետը՝.

- աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին,

-Ապահովում աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

- միջնակարգ կրթություն.
- Սույն պաշտոնի անձնագրի 10 կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018 թվականի օգոստոսի 10-ին Ժամը12:00-ին Գեղակերտի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք Գեղակերտի համայնքապետարան(հասցե՝ Մ. Մաշտոցի 30, հեռ.093 25 06 63) կամ Արմավիրի մարզպետարան (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառվարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.
- մեկ լուսանկար 3Х4 սմ չափի
- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքապետարան (հասցե՝ Մ. Մաշտոցի 30, հեռ.093 25 06 63) և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի հուլիսի 26 -ը: